Պարույր Սևակ

Անվերնագիր 26

Ա՛խ, քեզ ինչպե՞ս ասել, որ քեզ հիշում եմ դեռ,
Ինչպե՞ս չասել, որ դու դեռ թանկ ես ինձ համար,
Ինչպե՞ս մեզ բաժանող արգելակը քանդել,
Ինչպե՞ս չգալ քեզ մոտ, ինչի՞ համար:
Ինչպե՞ս չասել, որ՝ դու, միայն դո՛ւ չես թախծում,
Ինչպե՞ս ասել, որ ես ծնվել եմ քեզ համար,
Ինչպե՞ս չասել, որ ես միշտ էլ քեզ եմ տենչում,
Սակայն ինչպե՞ս ասել, ինչի՞ համար:
Չէ՞ որ բաժանվեցինք կարծես մեր ցանկությամբ,
Եվ այսօրը պարզ էր և ի՛նձ, և քե՛զ համար...
Հիմա ինչո՞ւ ցավել անցած երջանկությամբ,
Եվ չցավե՞լ, ինչո՞ւ, ինչի՞ համար:
Ինչպե՞ս, ինչպե՞ս ասել՝ նորից արի՛, արի՛,
Ինչպե՞ս չասել, որ ես ապրում եմ քե՛զ համար:
Գեթ չխոստովանե՞լ ցավը մեր սրտերի,
Խոստովանե՞լ, ինչո՞ւ, ինչի՞ համար...

27.VI.1946թ.
Երևան